

յաջորդած գիտնական գիւտերը, որ մեր գոված քաղաքակրթութիւնը շատ և շատ կողմերով միայն արտաքուստ փայլող կեղծոսկի է, որ մեր կառավարութեան եղանակները ոչ քրիստոնէական պահանջներին են համապատասխանում, ոչ էլ քաղաքակրթութեան պահանջներին: Այս կարծիքը բնականաբար բղրում է այն մտքից, որ ներկայ դարի բոլոր հարողական պատերազմները առաջ են եկել թագաւորող հաշտութիւնների կռիւներից կամ ազգային մեծութեան անյազ փափագից և երբէք տեղի չեն ունեցել յանուն ստրկացածների ազատութեան կամ ճշդութեան պաշտպանութեան,—եթէ միայն միաժամանակ աչքի առաջ չէ եղել որևէ եսասէր նպատակ:

Ասում են, իբր թէ իրաւաբանական անձնաւորութիւնները հոգի չ'ունեն. կառավարութիւնները—անկասկած—իրաւաբանական անձնաւորութիւններ են:

XX

ԸՆԶԵՐԸՆՈՒԹԵՆ Ո՞ՒՆ

Մեր հարկւրամեակի ամենաբնորոշիչ գծերից մէկն է անհատական հարստութեան ահագին և անընդհատ աճումը, մինչդեռ համահաւասար չէ աճել ամբողջ ազգի բարօրութիւնը: Շատ և շատ ապացոյցներ կան, որ չքաւորների թիւը, այսինքն՝ այնպիսիների, որոնք ապրում են լոկ իրանց գոյութիւնը պահպանելու համար անհրաժեշտ փոքրագոյն եկամուտով,—այժմ չափազանց մեծացել է, և նոյնպէս բազմաթիւ փաստեր կան, որ այդ չքաւորները ներկայումս կազմում են ամբողջ ազգաբնակչութեան աւելի մեծագոյն մասը, քան թէ դարիս առաջին կէսում և նոյնիսկ մեր պատմութեան ամբողջ նախընթաց ժամանակաշրջանում:

Որ անհատական հարստութիւնը շատանում է, երևում է նրանից, որ միլլիոնատէրերի թիւը շարունակ մեծանում է. նրանք կարողանալով զանազան միջոցներով տիրանալ ուրիշների դառն աշխատանքով ստեղծած հարստութիւններին՝ աւելումայ աղքատացրել են նրանց, որոնք ստեղծել են այդ հարստութիւնները: Վաթսուհ կամ եօթնասուհ տարի առաջ միլլիոնատէր շատ սակաւադէպ բան էր: Ես լաւ յիշում եմ, որ դեռ երեխայ ժամանակ հայրս կարդալով «Times» թերթի մէջ մի լուր, թէ մի մարդ (կարծեմ վաճառական) մահից յետոյ ժառանգ-

ներին թողել է մէկ միլիոն, զարմացած մնաց այսպիսի հարստութեան վրայ, այնպէս այդ մի երբէք չը լսած ըսն էր, իսկ այժմ այդպէսով հարուստները Անգլիայում տամեակներով են հաշուում, եթէ չ'տանք հարիւրներով, և արդէն ոչ ոքի մէջ մի տոմսէին զարմանք չ'են գրգռում, իսկ Ամերիկայում, ուր բնական հարստութիւնները չափազանց առատ են, իսկ նրանց մշակելու համար անհրաժեշտ աշխատող ձեռների թիւը շատ մեծ, միլիոնատէրերը աւելի ևս բազմաթիւ են։— այնտեղ հաշուում են մօտաւորապէս երկու հազար միլիոնատէր։

Մեր երկրում, Մեծ Բրիտանիայում, տարեկան աշխատանքի արդիւնքը—որից ամբողջ աղղը իր գոյութեան միջոցներն է հայթհայթում,—հաշուում են 1,350 միլիոն ֆունտ ստերլինգին (13½ միլիարդ ռուբլու) հաւասար։ Այս գումարը այնպէս անհամաչափ կերպով է բաշխւում, որ մէկ միլիոն հարուստները ընդհանուր եկամուտից երկու անգամ աւելի են ստանում, քան թէ քսան ևս վեց միլիոն բանուորները։ Ամերիկայում այս անհասարկութիւնը աւելի ևս մեծ է. 4,047 հարուստ ընտանիքները այնտեղ զբէթէ հինգ անգամ աւելի մեծ սեփականութիւն ունեն, քան թէ 6,599,796 աղքատ ընտանիքները։

Հարստութիւնների բաշխման մէջ նկատուող այսպիսի անփազանց անհասարկութեան ու այստեղից ծագող բոլոր հարիւրների պատճառները միևնոյն են երկու երկրներումն էլ,— հարուստների մէկ տեսակը իրօք մենաշնորհուած տէր է ամբողջ հողի և նրա բովանդակած հանքային հարստութիւնների, իսկ միւս տեսակը նոյն կերպով՝ տէր է այն բանի, ինչ որ արդիւնադործական գրամագլուխ է կոչւում։ Այս երկու դասակարգերը կարող են գրամատէրեր կոչուել և իբրեւ մենաշնորհ օգտւում են արդիւնադործութեան բոլոր պտուղներից ու արդիւնադործութիւնը բարեկաւոյ բոլոր գիտնական գիւտերից։ Այս հանգամանքը անխուսափելի կերպով արած է դալիս նրանից, որ ով ոչ հող, ոչ գրամագլուխ ունի, հարկադրուած է մրցմամբ նշանակուած վարձով աշխատելու և բանելու գրամատէրերի օգտին, որոնք հէնց այն պատճառով, որ հող և գրամ ունեն, տիրանում են և իրանց սեփականութիւն են դարձնում բոլոր գիտնական գիւտերն ու շահագործում են աղղի և նոյնիսկ ամբողջ քաղաքակրթուած աշխարհի բոլոր հնարագիտական ընդունակութիւնները։ Այս բանից է առաջ գալիս այն, որ շոգենաւերի, երկաթուղիների, հեռագիրների, մեքենական գիտութիւնների զարգացումը, որը մեծացնում է աղղարնակութեան արդիւնաբերական ոյժերը և շատացնում է նիւթական արդիւնքների ընդհանուր քանակութիւնը, այսինքն՝ երկրի իս-

ձևական հարստութիւնը, առնուազն տասն անգամ աւելի արագ, քան թէ ազգարնակութիւնն է աճում,—որ այդ զարգացումը, այժմեան պայմանների մէջ, այդ աւելացած հարստութիւնը տալիս է բացառապէս մէկ դասակարգի ձեռքը,—հողատէրերի և դրամատէրերի ձեռքը, իսկ դործարանական բանւորներին և հնարողներին, արդիւնաբերութեան այդ իսկական լծակներին, թողնում է նոյն կամ գրեթէ նոյն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ որ եղել են առաջ: Եթէ երկրի այդ տասնապատիկ շատացած հարստութիւնը այնպէս բաժանուած լինէր, որ ամենքը հաւասարապէս օգտուէին քաղաքակրթութեան մարդկութեան բարիքներից, այն ժամանակ ամեն մի բանւոր տասն անգամ աւելի կ'ունենար ամեն տեսակ պիտոյքից և յարմարութիւնից, իմիջի այլոց՝ և աւելի երկարատե հանգիստ ու կեանքի աւելի շատ վայելքներ. այն ժամանակ ոչ ոք չէր մեռնի սովից, ոչ ոք դատապարտուածի պէս չէր չարչարուի օրական 14 և 16 ժամ սոսկ իր գոյութիւնը պահպանելու համար, ոչ ոք ըստիպուած չէր լինի կեանքը կարճացնել անառողջ և վտանգաւոր պարապմունքներով, և այնուամենայնիւ միեւնոյն ժամանակ հողատէրերն ու դրամատէրերն էլ կը կարողանային իրանց համապատասխան բաժինն ունենալ հարստութեան ընդհանուր յաւելման օգուտներից: Մինչդեռ ներկայ հանգամանքներում այդ մենաշնորհուածները շատ և շատ անգամ աւելի մեծ բաժին են ստանում, քան թէ պէտք էր, և հետևանքն այն է լինում, որ եթէ վերցնելու լինենք բանող դասակարգը իր ամբողջութեամբ, հարստութեան այդ ամբողջ յաւելումից բանւորի ձեռքը ոչինչ չէ ընկնում կամ շատ քիչ է ընկնում:

Բաղմածիւ փաստեր կան, որոնք ապացուցում են այս մտքի ճշմարտութիւնը. նախ և առաջ Հիֆրենի, Միւլհոլլի և Լէոնի Լեւիի նորագոյն վիճակագրութիւնները ցոյց են տալիս, որ բանւոր դասակարգին պատկանող իւրաքանչիւր չափահաս տղամարդու տարեկան միջին եկամուտը հաւասար է 77 ֆունտ ստերլինգի կամ գրեթէ ճիշտ 30 շիլլինգի (մօտ 15 ռուբլու) շաբաթական: Բայց որովհետեւ այդ բանւորներից բաւականին շատերը, օրինակ՝ հմուտ մեքենապետները, ակահանները և այլն, այդ միջին վարձից շատ աւելի են վաստակում, հետեւապէս, մնացածները պէտք է աւելի պակաս ստանալիս լինեն: Չարլս Բուտտը նորերս հաշուել է, որ Լոնդոնում «չքաւորութեան ծայրին կանգնած» ընտանիքի շաբաթական եկամուտը հասնում է 21 շիլլինգի, որովհետեւ փորձից յայտնի է, որ այս գումարից պակաս եկամուտը անպայման կերպով չէ աւականանում ամենամանրաժեշտ պէտքերին—այն է՝ սննդի,

շորի, առողջ բնակարանի և բաւականաչափ վառելիքի կարիքներին գոհացում ապու համար Բուսուր աշուհեան պնդում է, որ Լոնդոնում մօտ 1,300,000 մարդ վաստակում է յիշուած գումարից պակաս, և ի՞նչ այս թիւ վրայ աւելացնելու լինենք այն անձանց, որոնք պահւում են ազգաստանոցներում, բանտերում, հիւանդանոցներում և ամեն տեսակ ազգաստաններում, մենք կը գտնէք այն սղարդի եղբակացութեանը, որ Լոնդոնի ամբողջ ազգաբնակչութեան մէկ երրորդականը ապրում է աղքատութեան և սոսկալի չքաւորութեան մէջ, որ այդ չքաւորների մեծագոյն մասը միեւնոյն ժամանակ հեծում է ուժից վեր անյոյս աշխատանքի ծանրութեան տակ, մի այնպիսի աշխատանքի, որը ընդմիջւում է աւելի ևս սոսկալի պարսպութեամբ և անցործութեամբ, որին սովորաբար ընկերանում է մաշող ահ ու գողը և երբեմն սովածութիւնը: Այս է թէ մեր բոլոր մեծ քաղաքների և թէ՛ պակաս չափերով—ամբողջ երկրի կեանքի ճշգրիտ պատկերը: Չէ՞ որ այս ամենը վատ ազդեցից է, որ իբր թէ ժողովրդի գրութիւնը լաւանում է: Ո՞վ կը համարձակուի պնդել, որ ներկայ դարի սկզբում Լոնդոնի բնակիչների աւելի քան մէկ երրորդականը բաւականաչափ միջոցներ չէ ունեցել իր սոսկ գոյութիւնը պահպանելու համար. և թէ ճշմարիտ տեղի ունեցած լինէր որեւէ բարեփոխութիւն բանւոր դասակարգի գրութեան մէջ՝ հարստութեան ընդհանրապէս շատանալուն հետ զուգընթացաբար, ուրեմն պիտի ենթադրէինք, որ դարիս սկզբում Լոնդոնի ազգաբնակչութեան կէսը ապրելիս է եղել նոյնպիսի աղքատութեան և չքաւորութեան մէջ, ինչպէս այժմ: Ես ոչ մի հեղինակ չը գիտեմ, որ ոչ միայն ապացուցած, այլ գտնէ արտայայտած լինէր մի այսպիսի միտք: Ես ինքս հաւատացած եմ, որ նախորդ շրջաններից ոչ մէկում չէ եղել Լոնդոնում մի այնպիսի ահագին տոկոս «չքաւորութեան ծայրից» էլ վատթար գրութեան մէջ ապրող մարդկանց, ինչպէս ներկայումս, և ես ոչ մի բարեփոխութիւն չեմ նկատում բազմազան և բազմատեսակ բանւորների մեծամասնութեան կեանքի մէջ, մինչդեռ այդ բանւորների թիւը այժմ աւելի շատ է, քան թէ եղել է երբեք: Այս միտքը հաստատուելու համար մի քանի օրինակներ կը բերեմ:

1856 թւից սկսած գլխաւոր վիճակագրապետը ցուցակագրում է բոլոր՝ աշխատանոցների, հիւանդանոցների և այլ հասարակական հիմնարկութիւնների մէջ մեռածների թիւը—ինչպէս Լոնդոնում, նոյնպէս և ամբողջ Անգլիայում և Վալլի-

առւմ *), և երեւց, որ թէ այստեղ և թէ այնտեղ այդպիսի մեռնողների տոկոսը հետզհետէ մեծանում է վերջին 38 տարիների ընթացքում:

Ահա հինգամեակների միջին թւերը, սկսած 1870 թւից.

Մահացութիւնը Լոնդոնի հասարակական հիմնարկութիւնների մէջ

Թւականները	Տոկոսը ընդհանուր մահացութեան հետ համեմատած
1861—1865	16,2
1871—1876	17,4
1876—1880	18,6
1881—1885	21,1
1886—1890	23,4
1891—1895	26,7

1861—1865 թ. թ., առաջին հինգամեակում, մահացութիւնը հաւասար էր ընդհանուր մահացութեան 16,2%-ին, 1892—1896 թ. թ., վերջին հինգամեակում,—26,9: Եւ մանաւանդ սարսափելին այն է, որ նախ և առաջ՝ այդ շրջանի ընթացքում մասնաւոր բարեգործութիւնը հափազանց զարգացել է, և երկրորդ՝ որ գրեթէ շաբաթէցշաբաթ ազգաբնակչութեան մէջ նկատուում է աւելի և աւելի սաստկացող զգուանք դէպի աշխատանոցները, այնպէս որ շատերը գերադասում են աղքատութիւնից սովամահ լինել, քան թէ դիմել բարեգործութեան դեկավարներին: 1860-ից մինչև 1885 թ. Լոնդոնում աւելի քան 130 նոր բարեգործական հիմնարկութիւններ են հիմնուել, իսկ յաջորդ տասն տարուայ մէջ սրանց վրայ աւելացել է այլևս մօտ 50. ուղիղ է, այդ հիմնարկութիւններից շատերը փոքր և զուտ տեղական հիմնարկութիւններ են, բայց դրանց մէջ կան և այնպիսիները, որոնց գործունէութիւնը ամբողջ Լոնդոնըն է ընդգրկում և որոնց ազդեցութիւնը շարունակ ընդարձակւում է: Օրինակ, դ-ր Բալնարդօի ապաստանները, որոնք 1866 թւին սկսել են գործել շատ համեստ չափերով, արդէն այնչափ զարգացել են, որ 5,000 երեխայ, որոնք այլա-

*) Մեռնողների տոկոսը Անգլիայում և Վալլիսում երկու անգամ փոքր է, քան թէ Լոնդոնում:

պէս մտաբացկան կամ յանցաւոր պիտի դառնային, այժմ նը-
րանց շնորհիւ մեծանում են, կրթւում են և մարդ են դառ-
նում, մնալով աշուհեակ Անգլիայում կամ զապիկով զապոթ-
ները: Անտուն-անտէրներին խնամող անգլիական ընկերութիւ-
նը միայն 1882 թիւն է հիմնուել, իսկ այժմ նա արդէն պա-
հում է մօտ 2,000 երեխայ, Լոնդոնում գոյութիւն ունեն մօտ
40 ուրիշ նման ընկերութիւններ, որոնցից խրաբանչիւրը խը-
նամում է 250-ից մինչև 1,000 երեխայ, մօտ 50 ընկերութիւն
խրաբանչիւրը աւելի փոքրութիւ երեխաներով, և բացի այդ
— բազմաթիւ անկեղանոցներ, հիւանդանոցներ, ուղղիչ և այլ
ապաստաններ և բարեգործական գործոցներ: Այս բոլոր հիմ-
նարկութիւնները անկարող լինելով յաղթելու շարունակ
սոսակացող ապաստութեանն և կարիքին՝ անդադար գիմում են
հասարակութեանը, պահանջելով նոր և նոր, մեծ և մեծ գրա-
մական օժանդակութիւններ: Մեծ օգնութիւն է հասցնում նաև
կազմակերպուած բարեգործութեան ընկերութիւնը, հիմնելով
ղիշերելու տներ և կազմակերպելով երկրագործական ապաստան-
ներ: Նոյն ուղղութեամբ գործում է նոյնպէս «Փրկու-
թեան Բանակը»: Եւ այս ամբողջ բարեգործական խնամատա-
րութիւնը օրէցօր ընդարձակում է, բայց միևնոյն ժամանակ
հասարակական բարեգործական հաստատութիւնների մէջ իրանց
վերջին օրերը բաշ տուղների և մեռնողների թիւը աճում է
աւելի արագ, աճում է նաև մահացութեան տոկոսը ընդհանուր
մահացութեան հետ համեմատած: Չը նայելով որ չքաւորութիւ-
նը, աղքատութիւնն ու սովածութիւնը ակներեւ կերպով սնում
են, իրերի ներկայ վիճակի պաշտօնական կողմնակիցները, հրա-
պարակախօսների ու քաղաքական գործիչների ահազին մեծա-
մասնութիւնը պնդում է, որ կարիքը պակասել է, պնդում է
նրա համար միայն, որ բարեգործական հիմնարկութիւնները
բազմացել են, և խիստ միջոցների շնորհիւ՝ վերահսկողութիւնից
ազատ մասնաւոր ըարեգործութիւնը իրօք կամ պակասել է
կամ բոլորովին դադարել է, — մինչդեռ աչքից բաց են թողնում
այն հանգամանքը, որ չքաւորների լաւագոյն մասը զերադա-
սում է սովից մեռնել կամ անձնասպանութեամբ վերջ դնել
չարքաշ կեանքին, քան թէ թողնել իրանց տուն ու տեղը, ի-
րանց ողորմելի օջախը, և խոյս է տալիս աշխատանոցների
տաղտուկ, սարկական և ասես բանտային ապրուստից:

Եւ ճշմարիտ որ անձնասպանութիւնները բազմանում են
սոսկալի արագութեամբ: 1861 թիւ 1347 դէպքից նրանց թիւը
հասել է 1895 թիւն 2,796-ին: Այս թւերը վերցրուած են Ան-
գլիայից և Վալլիսից. եթէ այս թւերը տոկոսի վերածենք՝ ազ-

գարնակութեան հետ համեմատած, կը գտնենք, որ անձնասպանութիւնների թիւը մեծացել է մէկ միլիոնի վրայ 67-ից մինչև 92: Դննութիւնները ցոյց են տալիս, որ անձնասպանութեան պատճառը շատ յաճախ կամ անծայր չքաւորութիւնը կամ չքաւորութեան երկիւղն է լինում: Միւս կողմից անձնասպանների շարքերումն են այն ապարախտ տղամարդիկ և կանայք, որոնք ծերութեան սև օրին հասնելով և թուլանալով կամ հիւանդանալով՝ անկարող են լինում աշխատելու մէջ մրցել աւելի երիտասարդ և աւելի առողջ ախոյեանների հետ, որոնք նրանց բոլորովին ետ են մղում և զրկում են այդպիսով անհրաժեշտ վաստակից: Եթէ չքաւորութիւնը ճիշտ որ պակասելիս և չքաւոր դասակարգի դրութիւնը ամեն տասնամեակում ճիշտ որ աւելի բարւոքուելիս լինէր, այն ժամանակ բոլորովին անբացատրելի կը լինէր անձնասպանութիւնների և հասարակական ապաստաններում մեռնողների թւի շարունակ մեծանալը,—մի փաստ, որ նկատուում է վերջին աւելի քան՝ երեսուն տարիների ընթացքում, մինչդեռ մասնաւոր բարեգործութիւնը իր զանազան ձևերով այնչափ մեծ ծաւալ է ստացել: Եթէ չքաւորութիւնը ճիշտ որ պակասելիս լինէր, այն ժամանակ պէտք էր սպասել, որ այսպիսի ահազին և լայնածաւալ դառած մասնաւոր բարեգործութիւնը շատ հեշտ վերջացրած կը լինէր չքաւորութեան գոնէ ամենասոսկալի տեսակները, պակասեցրած կը լինէր մահացութիւնը աշխատանոցներում և զանազան ապաստաններում, քչացրած կը լինէր աղքատութիւնից անձնասպանութեան դիմողների թիւը և բոլորովին ոչնչացրած կը լինէր քաղցած-սոված մեռնելու դէպքերը աշխարհիս ամենահարուստ և ամենապառատաձեռն քաղաքի—Լոնդոնի մէջ: Մինչդեռ փաստերը հակասում են այս ամենին, և ես պնդում եմ, որ այս բոլոր երևոյթները ուրիշ ոչ մի բանաւոր պատճառներով չեն բացատրուում, բացի ամենաետին աղքատութեան և չքաւորութեան շարունակ սաստականալով:

Ժամանակակից չքաւորութեան պատկերները

Այստեղ բերած սոսկ թւերը, որոնք ապացուցում են, թէ որչափ անհաւասար կերպով է բաժանուած երկրի հարստութիւնը և որչափ լայն ծաւալ է ստացել մեր շուրջը աղքատութիւնը, բաւականին պերճախօս են և նշանաւոր են ամեն մի իմաստասէրի և գիտնականի համար, սակայն կարող են համոզել չէ լինել սովորական ընթերցողի համար, եթէ չ'աշխատենք

մի քանի թանձրացեալ օրինակներով պարզ հասկացողութիւն տալ ներկայումս տիրող ծայրայեղ չքաւորութեան մասին: Այդ պատճառով այստեղ կը բերեմ մի քանի փաստեր, որոնք ներկայացնում են հազարաւոր մարդկանց կեանքի բնորոշ պատկերը մեր երկրի բոլոր մասերում:

Նախ լսենք, թէ ինչ է գրում 1883 թ.ին Bitter Cry of Outcast London («Լոնդոնի մեռեալների դառն ողբը») գրքի հեղինակը.

Նրա գրքի մէջ նկարագրած փաստերը թէև սկզբում բաց էին ստում կամ չափազանցեցած էին համարում, բայց շուտով բոլորովին ստույգ ճանաչուեցին և հաստատուեցին յատկապէս այդ նպատակով կազմուած քննիչ մասնաժողովի կողմից: Լոսկենք չքաւորների բնակարաններից.

«Այս էջերը կարգացողներից շատ քչերը միայն գտնէ մի չնչին հասկացողութիւն ունեն այն զարհուրելի որջերի մասին, ուր տանեալ հազարաւոր մարդիկ վխտում են այնպիսի սարսափելի պայմանների մէջ, որոնք յիշեցնում են միայն միջնադարեան սարկափաճառ նաւերի արգելանոցները: Այդ որջերը հասնելու համար մարդ պէտք է անցնի բակերով, ուր լճացած աղբակոյտներից, ամեն տեղ ցիրուցան կզած և յաճախ ոտների տակ ձլլող աղտոտութիւններից թռնաւոր զազեր են բորձրանում և լցնում օդը: Այդ բակերի մէջ երբեք չէ թափանցում ոչ արևի շողը, ոչ էլ զով քամու թևի շունչը, այգաեղ հողը չէ տեսել մի կաթիլ մաքուր ջուր և երբեք չէ լուացուել: Այնուհետև դուք պէտք է մաղլցէք փտած սանդուղքով, որը ամեն բոպէ կարող է փուլ գալ ձեր ոտների տակ և որը տեղտեղ արդէն իսկ-որ քայքայուել է: Շօշափելով պէտք է ճանապարհ գտնէք մութ ու կեղտոտ անցքի մէջ, որ լցուած է զրզուելի ճիճուներով և սողուններով: Եւ ապա, եթէ ուշագրնաց չէք եղել խեղդող զարշահոտութիւնից, կարող էք մտնել վերջապէս այդ բները, ուր մարազն արած հօտի պէս վխտում են՝ ձեզ հետ այն մարդկային ցեղին պատկանող էակները, որի համար խաչուեց Քրիստոսը»:

«Այդ զարշահոտ վարձու բնակարանների իւրաքանչիւր սենեակում տեղաւորուել է մէկ կամ երկու ընտանիք: Սենեակի մէկի մէջ միասիրտները հետեւեալ պատկերը գտաւ. տան դըլուխը ծաղկով հիւանդ պառկած է, կիներ նոր է վերկացել ծըննդարեւութիւնից, և նրանց շուրջը վազվզում են կիսամերկ, ցեխոտուած մանուկներ: Մի ուրիշ տեղ եօթը մարդկային էակ կուչ են եկել նկուղի խոհանոցում, և մէջտեղը պառկած է մեռած երեխայ: Կողքին բնակւում է մի որբեայրի վեց երե-

խաներով, որոնցից երկուսը քութէշով հիւանդ են: Մի ուրիշ սենեակի մէջ—վեց մարդ, քոյր և եղբայր, 29 տարեկանից ըսկսած և աւելի փոքր, կենում, ուտում և քնում են միատեղ»:

Այս զարհուրելի և մարդկութեան համար անարգ նկարագրութիւնը շարունակուում է այնուհետև նոյն ոգով, և հեղինակը հաւատացնում է մեզ, որ ինքը «դիտմամբ չէ ընտրել այդ դէպքերը», այլ դրանց կարելի է հանդիպել ամեն տան մէջ, անցնելով «բակից բակ, փողոցից փողոց» և որ իր նկարագրութիւնը բոլորովին չափազանցացրած չէ, այլ ընդհակառակը՝ գոյները աւելի թուլացրած են, և որ իսկապէս իրականութիւնը այն աստիճան սարսափելի է, որ նոյնիսկ անկարելի է ամբողջ ճշտութեամբ նկարագրել գրչով:

Այժմ տեսնենք, թէ ինչպիսի գործերով և արհեստներով են այդ մարդիկ իրանց գոյութիւնը պահպանում: Մի կին, որ վարտիկներ է կարում, կարող է օրական մէկ շիլլինգ (50 կոպ.) վաստակել, եթէ աշխատում է տասն եւ եօթը ժամ օրական: Մի ուրիշ կին, խնամքին տակ ունենալով հիւանդ ամուսին և փոքրիկ երեխայ, որին նայել է պէտք, շապիկներ է կարում, դիւթինը երեք պենսով (12 կոպ.) և հազիւհազ օրական կարողանում է վաստակել վեց պենս: Մի տեղ մի կին պահում է իր կոյր ամուսնուն, պատրաստելով լուցկատուփեր 12, դիւթինը 2½ պենսով (10 կոպէկով), որից մէկ պենս վճարում է իր օգնական աղջկան: Մի ուրիշ տեղ ահա մի մայր գրաւ է դրել իր չորս երեխաների ցնցոտիները, ոչ թէ հարբելու, այլ հաց և վառելիք գնելու համար. նրան տուել են միայն մէկ շիլլինգ (50 կոպ.), և նա դնել է եօթը գրվանքայ ածուխ և մի պատառ հաց: Պատկերացրէք ձեզ խեղճ մօր յուսահատութիւնն ու տանջանքը, մինչև որ նա վճռել է այդ բանն անել: Տասն և հինգ տարի է անցել այն օրից, երբ կազմուել է յատուկ «Արքունի յանձնաժողովը», իսկ իրերի դրութիւնը քնում է առաջուայ պէս սոսկալի: Ահա թէ ինչ է ասում Արտուր Շերվելը իր նորերս լոյս ընծայած «Արեւմտեան Լոնդոնի կեանքը» գրքի մէջ, որտեղից իմանում ենք, որ Սոգօից դէպի հիւսիս գտնուած Թաղում աւելի քան 100,000 մարդ ապրում է այնպիսի կացութեան մէջ, որը Բուսսի «չքաւորութեան ծայր» առնուանուած կացութիւնից էլ վատթար է.

«Նոյնիսկ սովորական պայմանների մէջ աղքատութիւնն ու կարիքը զարհուրելի են, բայց երբ վրայ հասաւ 1895 թականի առանձնապէս խիստ ձմեռը, այդ ողորմելիների վիճակը աւելի անտանելի դարձաւ: Բազմաթիւ ընտանիքներ շարաթններով ապրում էին միայն բարեգործական ճաշարաններից

ստացած սուղով և հացով: Ի՞նչ որ միայն կարելի էր ծախել կամ գրաւ գնել կահկարասիքից կամ շորեղէնից, — ծախւում և գրաւ էր գրւում, յաճախ վերջին ստնամանք հանում էին երեսխաների տանիքից և գրաւ էին գնում հաց կամ վառելիք գնելու համար: Անթիւ-անհամար բնտանիքներ այս սարսափելի ցրտերին օրերով մնում էին առանց կրակի և լոյսի, յաճախ առանց օրեւէ կերակրի, եթէ հաշիւ տանելու չը լինէր այստեղից-այնտեղից սրտառնարար ձեռք ձգած մի կտոր հացը կամ թէյը: Մէկ բնտանիք շարաթներով բացի հացից, թէյից և հալած ճարպից ոչինչ բերան չէր գրել: Մի ուրիշ սենեակում մօրից և վեց երեխաներից բաղկացած մէկ բնտանիք (հայրը արդէն եօթը շարաթ պատկած էր հիւանդանոցում) ապրում էր գնելով մէկ պենսի (4 կոպ.) հաց, մէկ պենսի թէյ, կէս պենսի շաքար և կէս պենսի կաթ — երկու օրուայ պաշար, այն էլ ապագոյի: Մի ուրիշ փողոցի կեղտոտ սենեակի մէջ գտան մի քանի բոլորովին մերկ երեխաներ, — Ազամի զգեստով ամենաստատիկ և յարասե ցըրտին: Նրանց մայրերը տանը չէին, գնացել էին առատօտւանից աշխատանք սրահելու: Պատահում էին այնպիսի բնտանիքներ, որոնք երեք օրով բոլորովին առանց մի կտոր հացի էին նըստած, երբեմն նաեւ առանց վառելիքի: Միեւնոյն ժամանակ մէկ փողոցի վրայ գտան 115 չափահաս պարապ մարդ, որոնցից 80-ը անգործ էին մէկից մինչև ինն ամիս, մինչդեռ հէնց այդ միջոցին 7-ից մինչև 8 հազար մարդ այդ թաղում տեղ էր գտել զանազան ազգատանոցներում:

Մենք մի ուրիշ օրինակ կը բերենք Հարաւային Լոնդոնի ֆուրպուլլերներին *) կեանքից, որ նկարագրել է միստրիս Հոգսը «Nineteenth Century» թերթի 1897 թ. նոյեմբերի համարի մէջ.

«Հագիւ ութը քառակուսի ոտնաչափ տարածութիւն ունեցող մի սենեակ ծառայում է թէ զիշերելու և թէ ցերեկը անցկացնելու համար: Մէկ անկիւնում դրուած է մահճակալ՝ պարաններով կապկալած. նրա վրայ զիջուած է տեղաշորերի մի սև կոյտ: Սեղանի մէկ կէսի վրայ թափթփած են նախաճաշի մնացորդներ — չոր հաց, մի կտոր կարագ և ճաքած բաժակ, այս ամենը՝ մազի և բրդի հաստ շերտով ծածկուած: Սեղանի միւս կէսի վրայ դրուած է մաքրուած և խանութ տանելու պատրաստ կաշին: Միակ պատուհանը պինդ փակուած է, որովհետև կեղտոտ բակից ներս պրծած օդը պիտի մանր

*) Մորթեղէնի բուրգը խտակող բանտրներ-գարաղներ: Ե. Թ.

բուրդը փոշիացնէր և բանւորներէ քիթը, աչքերն ու թոքերը լցնէր և այդպիսով նրանց կեանքը աւելի ևս անտանելի դարձնէր: Նոր այցելուն չէ կարող սկզբում ոչ մի խօսք արտասանել, որովհետեւ կոկորդը սեղմւում է բրդէ փոշուց և կաշու իրար խառնող դարչելի հոտից»:

Այս դարհուրելի տեղում երկու կին բանում են օրական 13 ժամ և վաստակում են ընդամենը միայն 1 շիւ. 4 պենս (64 կոպ.), որից պէտք է հանել դանակների և սրոցների գինը և զանազան տուգանքներն ու զեղջերը: Հարեան սենեակում ապրում է մի ուրիշ կին ինը տարեկան աղջկայ հետ, նրանք ամբողջ օրը բանում են և վաստակում 6 շիւ. 7 պենս ($3\frac{1}{2}$ րուբլի) շարաթական. Աշխատանքը վերջացնելուց յետոյ նա յաճախ այնպէս յղճած է լինում, որ առանց ուտելու անկողին է գլորւում: Եւ մի բան, որ ամենից սոսկալին է—բոլոր այդ կարօտեալները, իրոնց թիւը հազարաւոր է, ոչ մի յոյս, ոչ մի լաւագոյն ապագայ չ'ունեն. նրանց առջև մինչև գերեզմանի դուռը միմիայն անընդհատ, միակերպ աշխատանքն է և այնպիսի չարչարանքներ և աղքատութիւն, որոնց մասին սովորական մարդիկ գաղափար անգամ չ'ունեն»:

Այստեղ բերուած նկարագրութիւնները տալիս են այն դարհուրելի չքաւորութեան պատկերը, որի մէջ ապրում է Լոնդոնի ազգաբնակչութեան քառորդ միլիոնից աւելին, և այդ դրութեան մէջ վաղ թէ ուշ պիտի ընկնեն այլ ևս ուրիշ մէկ միլիոն և կէսը, որն այժմ ապրում է «չքաւորութեան ծայրին» և օրէցօր սպասում է, թէ մի որեւէ հիւանդութիւն կամ գործի պակասութիւն իրան կը տապալի այդ անդունդի խորքերը: Եւ ինկատի առէք, որ ժողովրդի կացութեան հետ իրօք ծանօթ հեղինակները բոլորն էլ պնդում են, որ այդ աղքատութեան պատճառները ոչ թէ այդ ապարախտ մարդկանց արատներն ու հարեցողութիւն են, այլ ընդհանուր պայմանները, որոնց փոփոխելը նրանց ոյժից վեր է և որոնց շնորհիւ այդ արատներն ու հարեցողութիւնը լոկ անխուսափելի չարիքներ են:

Եւ մեր օրէնսդիրները չեն էլ կամենում լրջօրէն մտածել իրերի այս դրութիւնն ուղղելու մասին: Ահա մօտ 20 տարի է, որ խօսում են աւելի լաւ բնակարանների կառուցման մասին, բայց եթէ նոյնիսկ այդ տները կառուցուած էլ լինէին, ճրտեղից կ'ունենային այդ մարդիկ գործ, կերակուր, վառելիք: Այն միտքը, թէ տններն են այն ամենը կազմում, ինչ-որ հարկաւոր է չարիքը բուժելու համար, մի դառն ծաղր է և ապացոյց օրէնսդիրների անզօրութեան և տկարութեան:

Վտանգաւոր եւ վնասակար պարապմունքները

Մարտիկի կարօտութեան և չքաւորութեան կոյքին, որ զլիաւորապէս առաջ է գալիս անբաւարար վարձատրութիւնից, գործի պակասութիւնից կամ հիւանդութիւնից, գոյաթիւն ունի և մի այլ չարիք — հոգ չէ տարւում, որ մարդկանց կեանքը չը վնասուի և չը կրճատուի անառողջ և վտանգաւոր արհեստներից, որոնցից զրեթէ բոլորին էլ կարելի էր առողջ և անվրտանդ գործնել, եթէ միայն մարդկային կեանքը նոյնչափ զին ունենար, որչափ ունի առանձին անհատների գիզած հարստութիւնը:

Միտորիս Մալլեաի «Կանանց համար մի վտանգաւոր աշխատանքի մասին» շարադրութեան մէջ տեղեկութիւն ենք գտնում, որ վուշ սանրելով պարապող աղջիկները տասն և երկու տարուց յետոյ կորցնում են իրանց առողջութիւնը. ամենաուժեղ և առողջ տղամարդիկ, որոնք քիմիական գործարաններում են աշխատում, ընդհանրապէս չեն ապրում մինչև 50 տարեկան հասակը. ապակէ ամաններ փշոյները քառասուն տարեկան հասակում արդէն ձերանում են և յաճախ նոյնիսկ կուրանում են. Բրուսնէրի արհեստանոցների մէջ թոքախտից երեք անգամ աւելի մարդ է մեռնում, քան թէ ուրիշ արհեստանոցներում: Բայց բոլոր այս արհեստները շատ աւելի պակաս մահացութեան պատճառ են լինում, քան թէ կապարի սպիտակագեղի (շալարի) արհեստը, որով զբաղուած են բազմաթիւ կանայք և աղջիկներ: Մրանցից միայն շատ քչերն են մի քանի տարի գիմանում, առանց շօշափելի կերպով առողջութեան վնասուելը նկատելու. մեծ մասը սկսում է սաստիկ տանջուել մէկ կամ երկու տարի աշխատելուց, շատերը մեռնում են մի քանի ամսից յետոյ, մի քանիսն էլ մի քանի շաբաթից և նոյնիսկ օրից յետոյ: Այս պարապմունքի մէջ մահացութիւնը շատ աւելի մեծ է քան թէ մէկ ուրիշ տեսակի մէջ, և թէ իսկապէս քանիսն են մեռնում, յայտնի չէ, որովհետեւ բանւորներին հիւանդանալուն պէս իսկոյն ճանապարհ են դնում: Այնուհետեւ այդ արձակուած բանւորները գուցէ մի որոշ ժամանակ աշխատում են ուրիշ գործերով և ուրիշ տեղերում, այնպէս որ եթէ նրանք մեռնում էլ են յետոյ իսկապէս կապարից թունաւորուած լինելուց, նրանց մահուան կապը վտանգաւոր պարապմունքի հետ արդէն կտրուած է լինում: Կապարից թունաւորուած ծնողների որդիքը առհասարակ մեռնում են ցնցումներից. այսպէս մի կին կորցրել է ութը զաւակ: Միստեր

Ռոբերտ Շերրարդը իր՝ «Սպիտակ ստրուկները Անգլիայում» նոր աշխատութեան մէջ աւելի լիակատար տեղեկութիւն է տալիս նոյն նիւթի մասին և բոլորովին հաստատում է միստրիս Մալլետի՝ իրանից երեք տարի առաջ հրատարակած փաստերը: Եւ չը նայելով որ կապարի սպիտակադեղի գործարանատէրերն ու առհասարակ այս արդիւնագործութեամբ շահագրգռուած մարդիկ ճիգ էին թափում ջրելու հրապարակ հանած իրողութիւնը, այնուամենայնիւ յայտարարուած բոլոր գլխաւոր փաստերը վերցրած էին՝ բառացի կերպով, ինչպէս ցոյց տուեց պ. Շերրարդը իր աշխատութեան վերջին «Յաւելուածի» մէջ, զանազան գաւառական և յատուկ մասնաժողովների տեղեկատուներէ և ուրիշ նմանօրինակ պաշտօնական աղբիւրներէ, որոնցից նա օգտուել է զանազան արհեստների շէնսակարութիւնը հետազօտելու համար: Բաւական է որ մարդ կարգայ միայն այդ «Յաւելուածը», որպէսզի բոլորովին համոզուի, թէ՛ որչափ ահագին և սարսափելի է այն բանւորների թիւը, որոնք տանջուում են և մեռնում են Անգլիայում «վտանգաւոր արհեստներից», մի չարիքից, որի իսկական ծաւալի մասին դժուար է լինելու նոյնիսկ երբեւէ գաղափար կազմել:

Եւ բանն այն է, որ այդ բոլոր անթիւ-անհամար մարդկային կեանքների և մարդկային երջանկութեան խորտակումը անհրաժեշտ բան չէ, որովհետեւ արդիւնագործուած իրերի մեծ մասը առաջնակարգ պէտքերի համար չեն և բոլորն էլ առանց բացառութեան կարող են շինուել առանց առողջութիւնը վնասելու, եթէ միայն պատշաճաւոր ճնշում գործ դրուէր գործարանատէրերի և արդիւնագործողների վրայ: Թող վտանգաւոր արդիւնագործութիւնից առաջացած ամեն մահը մարդասպանութիւն համարուի, որի համար տէրերը, իսկ երբ գործը ընկերակցական է՝ տեսուչները պատասխանատու են և կարող են բանտարկութեան պատժի ենթարկուել, և իսկոյն միջոցներ կը հնարուեն շէնսակար գաղերը բոլորովին հեռացնելու կամ շահագործելու համար, կը կառուցուեն մեքենաներ մահաուիթ կապարէ սպիտակադեղը և սպիտակադեղային կիրը փոխադրելու համար: Համոզուած եմ, եթէ գործարաններում բանելիս լինէին բացառապէս իրանք տէրերը կամ նրանց ազգական և մերձաւոր մարդիկ, այդ բոլոր կատարելագործութիւնները վաղուց արդէն ներմուծուած կը լինէին:

Կապարից թունաւորուելուց աւելի սարսափելի է լուսակլրից (ֆոսֆոր) թունաւորուելը լուցկու գործարաններում: Լուցկի պատրաստել կարելի է բոլորովին առանց լուսակլրի (ֆոսֆորի). այս նիւթը միայն նրա համար են գործածում, որ մի քիչ

աւելի արժան է և աւելի զիւրին է բոցափառում, չը նայելով որ դարհուրելի կերպով է ազգում բանւորների առողջութեան վրայ: Ֆոսֆորից ծնօաները սկսում են փակել, և հիւանդութիւնը յաճախ մահով է վերջանում: Ապագայ դարերում հազիւ թէ հաւատան, որ այս դարհուրելի արգիւնազործութիւնը, որը մի հանրածանօթ, բոլորովին զխրաբարձ չարիք է, ազատ թոյլ էր տրւում ներկայ հարիւրամեակի վերջերում, այն հարիւրամեակի, որը իրաւամբ պարձենում է այնքան մեծամեծ ու հանրօգուտ գիւտերով և զապաթնակէտին հասցրած քաղաքակրթութեամբ: Ուրեմն ո՞ր տատիճանի անօգնական և յուսահատ գրութեան է հասել չքաւոր զատակարգը, եթէ մատաղահաս աղջիկները իրար ձեռքից են խլում այդ մահաբեր դործը, փոխարէն ուրիշ միջոցներով մի կտոր հացի և կեանքի իրաւունքի համար կուեկու:

Եւ ահա ամեն տեսակ չարչարանքների և կարեքների այդ ճիւղալային միջավայրի մէջ հարուստները աւելի հարստանում են և նոյնիսկ պարծենում են սրանով: City Press հաղորդում է, որ տասը տարուայ մէջ, 1880-ից մինչև 1890 թ. Լոնդոնի ամենահարուստ Սիւրի թաղի եկամուտը եղել է ոչ պակաս քան 30,755,283 ֆ. ստերլինգ (աւելի քան 300 միլլիոն բուրլի), և աւելացնում է. «Այս մի լաւագոյն ապացոյց է մեր առեարական առաջադիմութեան: Լոնդոնի ազգարնակութեան մի ամբողջ միլլիոնը բաւականաչափ կերակուր, ջուր և վառելիք չ'ունի, որ իր մարդավայել դոյութիւնը քաշ տայ,— և դիմացը այդ մեծ առեարական առաջադիմութիւնն է... Հաղարաւոր մարդիկ այլանդակում են, խեղաթիւրւում և տանջւում փնասակար արգիւնազործութիւնների մէջ, և դիմացը այդ մեծ առեարական առաջադիմութիւնն է: Աղքատութիւնից մեռնողների թիւը աւելացել է ընդհանուր մահացութեան 21²/₁₀-ից մինչև 26⁶/₁₀-ը, բայց այդ ի՞նչ է որ, եթէ մենք ունենք մեծ առեարական առաջադիմութիւն: Վնասակար արգիւնազործութեանց մէջ աշխատող արհեստաւորների ու բանւորների կեանքի միջին տևողութիւնը դարձել է միայն 29 տարուն հաւասար, մինչդեռ բարձր դասակարգերի մէջ հաւասար է 55 տարուն. միևնոյն է թէ միլլիոնաւոր մարդիկ սպանւում են 25 տարով առաջ, քան թէ բնական մահուան սահմանն է, բայց դրա փոխարէն մենք ունենք «մեծ առեարական առաջադիմութիւն»:

Պրոֆ. Կերնըսը զարմանալի կանխատեսութեամբ գրում էր դեռ 1874 թւին, թէ մինչև որ բանւորները կախում կ'ունենան իրանց զբաղմունքների մէջ զբամատէրերից, նրանց

կացութիւնը բարեփոխելու բոլոր փորձերը անօգուտ և ապար-
դիւն կը լինեն: Իբրև դասակարգ՝ բանւորները երբեք չեն
կարողանայ բարձրանալ: Քչերը, աւելի եռանդուն կամ աւելի
բախտաւոր աստղի տակ ծնուած անհատները, երբեմն կը կա-
րողանան դուրս գալ իրանց ընկերակիցների շրջանից, ինչպէս
որ տեղի է ունենում այժմ էլ, և անցնել բարձրադիր արդիւնա-
բերող դասակարգի շարքը, բայց ահագին մեծամասնութիւն ընդ-
միշտ կը մնայ նոյն կացութեան մէջ, ինչ կացութեան մէջ է այժմ:
Բանւորի աշխատանքի վարձը, իբրև վարձ, հմուտ արհեստա-
ւոր լինի դա, թէ հասարակ մշակ, երբեք չի կարողանայ ժամա-
նակակից սովորական վարձից շատ աւելի դառնալ»:

Այս տողերը գրելուց յետոյ անցել է արդէն մի քառորդ
դար, և բանւորների կախումը դրամատէրերից մեծացել է,
ու թէև դրամատէրերը, որպէս դասակարգ, հեքիաթական
հարստութիւններ են ձեռք բերել, սակայն բանւորների դը-
րութիւնը կը մնայ միշտ այնպէս, ինչպէս վերև է նկարագը-
րուած, մինչև որ բանւորները չեն հասկանայ, որ իրանց
միակ փրկութիւնը—ամբողջ գործը իրանց սեփական ձեռքն
առնելն է: Դրամատէրերը չեն համաձայնի որևէ զիջում անելու
և եթէ համաձայնուեն էլ, այդ չնչին բարեփոխութիւնները կը
լինեն յօգուտ բանւորների ընտրեալ մասի, իսկ ահագին մե-
ծամասնութիւնը միշտ կը թողնուի նոյն կացութեան մէջ, ինչ
կացութեան մէջ որ այժմ է: Այդ դրամատէրերը անկասկած
լաւ համոզուած են, որ եթէ այդ հազարաւոր՝ մի կտոր հացը
իւրաքանչիւր խլող մարդիկ չը լինեն, որոնք դրամատէրերի
համար աժան աշխատանքի մի անսպառ պաշար են կազմում,
իւրանք չեն կարողանայ հարստութիւն դիզել, և այս պատճա-
ռով սխտեմաբար ընդդիմադրում են ամեն տեսակ միջոցների,
որոնց նպատակն է աշխատանքի այդ պաշարը գործածել հէնց
իրանց՝ բանւորների օգտին և ներքեից մինչև վերև բարձրացը-
նել օրավարձը: Սրանով է բացատրուում, թէ ինչու նրանք ոչ
մի ուշադրութիւն չը դարձրին որպէս միտեր Մատերսի չա-
փաւոր առաջարկի վրայ, որ նա ներկայացրել էր «Անդործների
հարցը քննող յատուկ մասնաժողովին», նոյնպէս և միտեր Հեր-
բերտ Միլսի աւելի նպատակայարմար և գործնական նախա-
դրծի վրայ, որը 9 տարի առաջ բերուած էր նրա «Աղքատութիւնն
ու Պետութիւնը» գրքի մէջ:

Իր մահից մի քանի տարի առաջ մի ուրիշ խորհայտաց
և միաժամանակ զգոյշ մտածող, հանգուցեալ պրոֆ. Հեքսլին
հարկադրուած էր համաձայնելու պրոֆ. Կերնսի եզրակացու-
թիւնների հետ, որն ասում էր, թէ մեր կալուածատիրական և

գրամատիրական ժամանակակից սխառեմը աւելի արամադիր է մեծացնելու, քան թէ քչացնելու աղքատութիւնը, և նա այս կարծիքը արտայայտել է այնպիսի ազգու բառերով, որ երբէք աւելորդ չէ յաճախ կրկնելու Պնդկով որ բոլոր խոշոր արդիւնապարծական կենտրոններում որեցոր աճում է այն, ինչ-որ ֆրանսիացիք la misère են կոչում—այսինքն՝ թշուառութիւնըն ու աղքատութիւնը, նա շարունակում է.

«Այս մի այնպիսի կացութիւն է, որի մէջ սոսի գոյութեան համար անհրաժեշտ առաջին պիտոյքները, կերակուրը, շորն ու վառելիքը բանւորն անկարող է ձեռք բերել.—որի մէջ աղամարդիկ, կանայք և երիտասարդները հարկադրուած են խոնուելու կեղտոտ որջերում, ուր վայելչութեան մասին խօսք չէ կարող լինել և առողջապահական պայմաններով ապրելը մի անիրադրոճելի ցնորք է.—որի մէջ բոլոր զուարճութիւնները վերջանում են անասնական կրքերին գոհացում տալով և գինեմոլութեամբ.—որի մէջ համախմբուած են ամեն տեսակ չարչարանքներ, սովածութիւնը, հիւանդութիւնները, ֆիզիկական այլանդակութիւնը, բթամտութիւնը և բարոյական անկումը.—որի մէջ նոյնիսկ ագնիւ, աշխատասէր մարդը մի անընդհատ և ապարդիւն կռիւ է մղում սովածութեան դէմ, մի կռիւ, որը միայն գերեզմանումն է վերջանում... Նրը հասարակութեան կազմութիւնը՝ այսպիսի կացութիւնը բարեկալութու փոխարէն՝ ձգտում է միայն աւելի շարունակելու եւ նոյնիսկ սաստկացնելու այդ կացութիւնը, երբ ժամանակակից ընկերական կարգը չարն աչքի առաջ ունի, ոչ թէ ըարին, շատ բնական է, որ մարդիկ սկսում են մտածել, թէ արդեօք ժամանակ չէ՞ հիմնական փոփոխութիւն մտցնելու եւ միայն մի զուտ ճշմարտութիւն յայտնած կը լինեմ, եթէ ասեմ, որ ամբողջ արեւմտեան եւրոպայում չը կայ ոչ մի արդիւնադրական քաղաք, ուր չը լինէին բազմաթիւ մարդիկ, որոնք ապրում են վերեւ նկարագրուած կացութեան մէջ, և աւելի ևս բազմաթիւ մարդիկ, որոնք ապրում են հէնց այդ ընկերական ճահճի ծայրին, ուր նրանք կարող են ամեն բոլոր տապալուել *)»:

Բայց բացի աղքատութիւնից և վաղաժամ մահից՝ կան այլևս ուրիշ ապացոյցներ մեր ժամանակի ընկերական վատասողջ պայմանների: Առաջին տեղը բռնում է այն հանգամանքը, որ խելագարութիւնը սաստիկ շատացել է բացարձակ և թէ համեմատական թւերով: 1859 թւին մէկ միլիոն մարդուց խելագարուել են 1867 հոգի, իսկ 1889 թւին—2907, այսինքն՝

*) Nineteenth Century, 1888. փետրուար:

